



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 29

ՇԱՐԱՐ

16 ՅՈՒԼԻՍ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳՈՒՍՈՍՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆԻ
Տարեկան 50 Ղր.	Տարեկան 54 Ղր.	Տարեկան 12 Յր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՐՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, ձեռքով Պեյ խանին տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեղուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը տրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ Զենիթը՝ քի՛ Կ. Պոլիս, եւ քի՛ Դաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — Զենիթ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենեւնի բարձր պարգիւնին արժանացած են:


Հասր 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԵՐ — ԱՐՄԷՆ ԼՈՌԻՍԵԱՆ

(کتابخانه جهان) مطبعه سی — باب عالی جاده سی ۲۳

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապր-Ալի Հասսէսի քիւ 23



Ձեռքի, ոսքի ու ոսքի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անլերջ դժգոհութեանց
եւ տալտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Ե Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բոլանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՀԱՐԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|---------|--|
| ԲԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՒՏԱՐ | Չարլը Պօյու , թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 եւ 343 կրկին , Տիւզդուլուի տունը :

ՖԵՆԻՔՍ ՕԲԻԵԿԵՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԵՆՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

ՀԻԳԵՀԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Ժրանգ

17,000,000 Ժրանգ

ՖԵՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք եւ կարասիք:
ՖԵՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք մարդկային
կանքի վրայ:
ՖԵՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չողենաւի՝ եւ ա-
ռագաստանաւի վրայ:

Ընկերութեան գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ , Ընդհանուր գործակալութեան գրասեն-
եակն է Պոլիս, Ալեանաք խան, Թիւ 11—16 :

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ :

Լիազօր Գերկայացուցիչ
Գ. ՖԵՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՅԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/ւ 29

ՇԱԲԱԹ

16 Յուլիս 1905

ԱՆՑԵԱԼ ՈՒՐԲԱԹ ՕՐՈՒԱՆ ՆՈՂԿԱԼԻ ԱՐԱՐԻՔԸ

Անցեալ Ուրբաթ, Սէլամըզի արարողութենէն ետքը, երբ Վեհ. Կայսրը պիտի վերադառնար, մեղիքին բախէն և պողտայէն անդին, Կայս. հեծեալազօրաց գտնուած տեղին ետեւի կողմը, հիւրերու կառքերու կեցած տեղը, և մըզկիթէն աւելի քան 100 մեզր հեռու, բռնկում մը տեղի ունեցաւ, և ամէնուն ստոյգ պահապանը՝ Աստուած, իր երկնային խնամքովը պահպանեց մեր Վեհ. Կայսրը և Ն. Կ. Վեհափառութիւնը այս դէպքին միջոցին մեծ կորով ցոյց տալով, առանց աճապարանքի, ըստ սովորութեան նստաւ փառաւոր կառքին մէջ, և բարեւի կեցող իր Կայս. զօրքերը, ինչպէս նաեւ Աւստրիոյ Կայսեր կողմէ յատուկ պաշտօնով հիւրանոցը գտնուող աւստրիական զեւպանը և Սէլամըզի արարողութիւնը տեսնելու համար ներկայ գտնուող տեղացի և օտարազգի անձնաւորութիւնները իր Կայս. բարեւներուն արժանացնելէ վերջ, ընդհանուրին ծափերուն մէջ Կայս. Պալատ վերադարձաւ:

Այս բռնկման ոճիրին վատ հեղինակը կը փնտռուի, որու մասին պէտք եղած միջոցները ձեռք առնուած են, և ամէն կողմէ աղօթքներ կ'ըլլան Ն. Կ. Վեհափառութեան թանկագին կենաց արեւշատութեան համար:

Անցեալ Ուրբաթ օր Վեհ. Կայսեր Համիալիյէ մեղիքին մէջ Ուրբաթի աղօթքը կատարելէն ետքը՝ վերադառնալու պահուն տեղի ունեցած դէպքին միջոցին ցոյց տուած մեծ կորովը հիացում ազդած է ամէնուն: Այս ցաւալի դէպքին յանդգնող, մարդկութեան և քաղաքակրթութեան կողմէ անէժքով ու նողկանքով յիշուելու արժանի այս վատերուն արարքը աշխարհի ամէնէն եպերելի և մեծ ոճիրն է: Բոլոր տէրութիւնները համամիտ են և ամէն միջոց ի գործ կը դրնեն մէջտեղէն վերցնելու համար մարդկութեան քայքայումին յանդգնող այս անիծապարտները: Բացայայտ է որ ոչ մէկ տեղ օրէնքին ձեռքէն պիտի կրնան պրծիլ կրօնքի, մարդկութեան և քաղաքակրթութեան հիմնովին հակառակ այսպիսի վատութեան մը յանդգնողները: Մաղթենք որ ամէնուն ճշմարիտ պահապանը եղող Աստուած՝ միշտ իր հովանիին տակ պահէ մեր Վեհ. Կայսեր թանկագին կեանքը և արեւշատութիւն պարգեւէ Անոր:

գործս կըլլար յօդուածդ, որուն մէջ ռամիկ կիները կը խօսեցնէիր, անոնցմէ բառ մը, ոճ մը գտնելու համար պատշաճ բառ գիրքիս » :

Հիմա, որ գրական կարող յանձնախումբը, գիտցաւ գնահատել այս ընդարձակ և գեղեցիկ գործը, մեզ կը մնայ շնորհաւորել հեղինակը, և անգամ մ'ալ վեր հանել իր կարողութիւնը գրական ասպարէզին մէջ :


Երկու խօսք ռամիկ գրականութեան վրայօք :

Ռամիկ գրականութիւնը այն ճիւղն է, որուն վրայ արտաքին թուալէքը կը պակսի, բուն իսկ տարւն է ան, հին օրերու լեզուն, զոր մինչև մեր օրերը և թերեւս մեր թառնիկներն ալ պիտի գործածեն, կամ լսեն բերնէ բերան : Ոճի գեղեցիկութենէն, մասնաւոր յորհուրդէն բաւական զերծ, բուն իսկական զգուշումներու արտայայտութիւնը եղող այս խօսուածքի ձեւը, ամէն օր մեր աշխարհին մօտ լսելով հանգերձ, չեմ գիտեր ինչ պատճառաւ կարգ մը նորերուկ գրիչներ ուղեցին քաջքէլ և խարազանել գրականութեան մէջ ընական այս գրեւակերպը, առանց անդրադառնալով թէ՛ թերեւս լրագիրէ կամ յօդուածէ դուրս նոյն իսկ իրենք կը գործածեն այդ բանաձեւը առօրեայ կամ նուազ դարձուածքներով :

Տեղն է հոս յիշել թերթիս մէջ մշակուած այն կարգ մը յօդուածներուն մասին թէ՛ անոնք բուն իսկ պատկերն են ժողովուրդին բերնէն պոսկացած խօսքերուն, որոնց մէջ արուեստը, ոճի թուալէթը, լեզուն կեղծ շարդարանքը չիկայ, այլ լիկ ԱՆԱԿԱՆԸ, ԻՍԿԱՏԻՊԸ :

Արդ, Պոլիսի Հայեկարդին հեղինակը, որ ճշմարտը ըսելով, հայերէն լեզուն և անոր գրականութեանը քաջ աեղեակ ըլլալով հանգերձ, այսօր ռամիկ գրականութեան base ընդունած, և առ այդ ընդարձակ գործ մ'ալ արտադրած է, և քանի որ նոյն իսկ այդ աշխատութեան օրուան գրագէտ Քննիչ Յանձնախումբէն ալ իբր առաջնակարգ երկասիրութիւն ընդունուած, ուրեմն պէտք է եզրակացնել թէ՛ ռամիկ գրականութիւնը և իր ոճը ընդունուած է այսօր գրականութեան մէջ, և թէ զայն մշակելը իր այլադան դժուարութիւններուն մէջ, ամէն տիրացուի գործը չէ :

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ



Ա Ր Ծ Ա Լ Ո Յ Ս Ը

Հորիզոնին սեւ մուրը կ'անհետի,
Կը փարափ խաւարը մութ ամպերուն,
Լոյս-եռանդ մը կը սարածուի ամենդի,
Ու կը սրափի գիցով կեանքը երեւուն . . . :

Կը փարափ ծուլութիւնը գիշերուան,
Դանդաղ կեանքին փայլերուն պէս յուրեմ,
Ճակտի վրայ լոյս ֆրիկներ կը հեւան,
Ու կը հոսին աշխատութեան խոշորներն :

Պուրակներու նոսրերուն, ծառերուն,
Ծով երկրամ շուրջերուն տակ մութ ու սեւ,
Ջանք մը, խալս մը երկնից կ'իջնայ : ս հեռուն,
Ու կ'աշխատեն քիւլարներ յարաւ :

Կուգայ հեռուէն մեղմ ձայները կոտ մուրին,
Աշխարհէն ձեռքերուն մէջ ֆրեմած,
Սալին վրայ պինդ հարուստներ կը կառչին,
Աշխատութեան բոլոր աշխարհն է պատած :

Կը սարածուի արեւամբ արեւուն,
Մարդկութեան մէջ դրած կեանքի սեւ, գորով,
Աշխատանքի, ջանքի սերմերն, օրն է բուն
Կրնոյ արին մէջն ալ անուրէս ցանելով :

Ու գիշերուան ծուլութեան քորափած :
Քրիկներով ոգեւորուած եմ, անհուն
Նուսնով մը, ու կը մըխամ կայծ առ կայծ,
Ո՛հ, բանաստեղծն ալ կ'աշխարհէ այս պահուն . . . :

ԻՍԿԱՏԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ

տեր : 39. Ստակ դնել (խաղի մէջ) : 40. Համարի՛ ժամու , մօտենալ . (ինչ . ժամը հինգ ու կէսը կ'երթայ կոր , զիւերու պէս անօթի է փորս) : 41. Բարձրանալ (տարի-քի) . (ինչ . վաճճունն չիկամ , մինչև հոգ մ'երթար : 42. Կենցաղավարել , վարուիլ , ընթացք ունենալ . (ինչ . հետս աղէկ գնա , չէ թէ բարաս՝ հողի՛ս առ) : 43. Միտքը բանի մը հակիլ , հասկըցուիլ . (ինչ . ատիկա աս միտքին կ'երթայ . հոն չի գնաց խելքս) : 44. Գաղափարը յա՛նկարծ տեղ մը ոստնուել , երեւակայելի սահմանները զլել . (ինչ . մինչև անգամ Ակոբենք ըսեմ՝ գնա հասկըցիր՝ հո՛ն էին . — Ակոբենց ի՛նչ կ'երթաս , էլն) : 45. [Դիմադուրկ բայ , եզ . Յրդ . դէմք .] փըսխել , ործկալ կամ փորը ելլալ . (ինչ . վե-րէն վարէն կ'երթայ կոր) : 46. [Պէտք ցուց-նող գոյականի մը տրական հոլովին հետ կը նշանակէ] դայն բերելու , կամ ճարելու առնելու համար մեկնիլ . (ինչ . ջուրի եր-թալ , ածուխի երթալ) , այսինքն աղբիւրէն ջուր լեցնելու , ածուխ փնտռելու , դնելու : 47. [Դիմադրկ . բայ : Սահմ . եզ . Յրդ . դէմքը կը դրուի խօսքի մը ծայրը աւելորդաբար , մանաւանդ հրամայականի մը աւընթեր , թարմատար] : (ինչ . հո՛գ զիր երթայ , ա՛ռ երթայ , աւլէ՛ երթայ) էլն . :

ԵՐԹԱԼ ԳԱԼ . — 1. Երթեւեկել , անցու-դարձ ընել կամ պտրտելիլ : 2. Դրացիներու էլն . բարեկամութիւն հաստատելը փոխա-դարձ այցելութիւններով . (ինչ . տո՛տ էք իրարու հետ , առաջ կ'երթայիք կուգայիք նէ՛ . . .) : 3. Յառաջ ու ետ բանիլ (մե-քենայի թիւի էլն .) , երթուդարձել : 4. Պատգամաւորիլ : 5. Սիրտը նետել , բարա-խել , տրոփիլ , գործի մը հետեւանքը խոր-հելով վախ զգալ : 6. Յանկ-ը ընել կամ վրայ հասնիլ . (ինչ . դնաց եկա՛ն անանկ ատեն մը եկաւ որ . դացիր եկար՝ ինծի՛ տե-սար) : 7. Զգճգել , յետաճգել . (ինչ . գնա եկուրին գործն է մերինը) : 8. Հեռացունել , վտարել զոք՝ ետքէն կարօտը զգալու հա-մար . (ինչ . գնա մեռի՛ր՝ եկու՛ր սիրեմ) , առած որ կը նշանակէ « Յետ մահու է մարդ-կային գնահատումը » : — Այս « երթալ գալ » ոճին շրջուած մէկ ձեւն է հետեւեալը « Եկե՛ր ես՝ կ'երթանք էր » զոր ծերունիները սովոր

են գործածել , աշխարհային վայելքներէ ձանձրացողի կամ զուրցուած խօսք մը հաու-տատողի բարեպաշտ չեշտով մը :

ԵՐԹԱԼ ԿԱՅ , ԴԱԼ ԶԻԿԱՅ . (Բանաձե) . Հողվարքի կեանքը անդառնալի է :

ԵՐԹԱԼԴ ԸԼԼԱՅ ԴԱԼԴ ԶԸԼԼԱՅ . (Անէճք) :

ԵՐԹԱԼ ԵՐԹԱԼ՝ ԶԵՐԹԱԼ . Մեկնումը ճըդ-ճըգել . (ինչ . կ'երթայ կ'երթայ , չերթար . այսինքն դարձեալ հոս է) : Քեք . — Ո՛ր է է բայ երբ կրկնուի՝ շարունակական գործո-ղութեան մը իմաստը կ'առնէ , ինչ . ելլալ ելլալ ու նստիլ , կարդաց կարդաց՝ չի հա-տաւ , էլն . :

ԵՐԹԱԼԸ . քոյ . Երթ , գնացք , ընթացք , ուղղութիւն :

ԵՐԹԱԼՈՎ . (Մկբ .) . Եւս քան զեւս , հետգհետէ , օր օրի , (ինչ . երթալով շնորհքի կուգաս կոր . երթալով կը սղեն կոր գինե-րը . երթալով վրայ ես եկեր , էլն .) :

ԵՐԹԱԼՈՅ (Նխտկն .) . մեռնելու մօտ , մա-համեմ . (ինչ . դիմացի հիւանդնիս երթալոյ է) :

ԵՐԹԱՅ ԵՐԹԱՅ ՈՒ ԶԻԳԱՅ . (Զգուշական բնձե .) . Աստուած մի՛ արասցէ , չի ցուցնէ , (ինչ . երեկուան տաքը , երթայ երթայ ու չիգայ) :

ԵՐԹԱՆՔ ԸՍԻՐ՝ ԵՐԹԱՆՔ ԼՍԵՅԻՐ . (Հի-րի ուղղուած քաղաքավարիկ բանաձե՛ ա-նոր մեկնումը կասեցունող) :

ԵՐԹԱՍ ԲԱՐՈՎ . « Մնաս բարով » ին պա-տասխանը :

ԵՐԹԱՍ ԲԱՐՈՎ , ՆՈՐԵՆ ԳԱՍ ԲԱՐՈՎ . (Մեկնողի ուղղուած մաղթանք) :

ԵՐԹԱՍ ԲԱՐՈՎ , ԳԱՐ ՄԸՆԱԼ ԵՏԵԻԷԴ . (Նխտ . բնձե .) . Կորսուէ՛ , ա՛լ մի երեւար աչքիս :

ԵՐԹՈՒԻԼ կամ ԵՐԹԸՅՈՒԻԼ . (ԵՐԹԱԼ չէզ . բային կրաւորականը . թրք . կեթիլէ+լն խարգումանբար) . անդէմ բայ . 1. Երթալի կարելի ըլլալ . (ինչ . ոտքով չերթըցուիր հոն) : 2. Վստահուիլ , վարկ բանալ վաճառականի մը . (ինչ . Գ . . . * եանին 50-60 լիրայի աղ-բանք կ'երթուէր , ինչո՛ւ չի տուիք) : 3. Խ-թը սեպուիլ , գեղեցկութեան մը գնահա-տելի ըլլալը :

ԵՐԹՈՒՆԻԻՔ (ճամբայ) . գնալի , երեւ-թեւեկելի :

ԹԷՊԴԻԿ

ԽԱՍԳԻՒՂԻ ԱՂԶԻԿՆԵՐԸ

Անցեալները կերակրի մը, ես ալ սովորական մահկանացու քայլերս փութացուցի Հալըճը-Օղլուի նաւամատոյցը, ուսկից քովընտի դառիվերէ մը ուղղակի եկեղեցի դիմեցի, հակառակ ներքին անզուտ փափաքիս՝ որ ժամ առաջ Բեաղըտ-խանէի հոգեզմայլ ու մարմնապարար ծովափն ու մարդը կուղէր տեսնել :

Այդ օր եկեղեցին լեփ լեցուն էր, բայց ամէնքն ալ տեղացի չէին, կէսէն աւելին չըջականերէն դիմած էր, թէ եկեղեցին չէնցընելու, և յետ այնորիկ ամառը ածնելու, և թէ աւելին է՝ անաւոց կեանքը ուսումնասիրելու, որով մէկ քարով երկու թռչուն զարնելու ճարտիկութիւնը կուենեային, ուստի ես ալ նոյն ախտէն վարակուած՝ շուտով քօտաքս լարեցի ու պատկեր քաշելու զրադեցայ, փոխանակ թռչող ու ճուղող խուլիկները դիտելու, վասն զի որչափ ալ խառնուցին ոչ տեղացեաց խառնուած էր, դարձեալ իր յատուկ կողմերով կրնար դանաղանուիլ, ուրեմն տեսնենք թէ՛ որոնք են իր ձերքերը, բարեմասնութիւնները և թէ յատկանիշ կողմերը, այդ՝ իմ մինիսիկ գործիքս ցոյց պիտի տայ, տեսնենք մեզի ինչէր պիտի պատմէ, Խաւ գիւղի նազելի օրիորդները իրենց գիւղին անուան արժանի պատկեր մը պիտի ցուցադրեն :

Գիւղին խաւ ամականով մկրտուելուն ստուգաբանութիւնը, տեղացի չըլլալուս կանգիտանամ, բայց տկար կարծեօքս (որ ճշմարտութիւն ալ է) կրնամ գուշակել թէ՛ տեղւոյն դիրքին ու իր պարագայներուն աննըման լինելուն՝ խաւով որակած են, ուրեմն մաղթենք որ գիւղին փափուկ սեռը տեսակին ու համայնքին մէջ նախանձելի վիճակ մը ունենայ, բայց դանք մեր մեքենային, որ մեզ պիտի պատմէ ճշմարիտը հակառակ զայն գործածողին խախտութեան, որ նորամուտ մըն է արհեստին մէջ, որով բոլոր պատասխանատուութիւնը չարածճի քառակուսի սե տուփիկին պէտք է վերադրել, որ մի և նոյն ատեն պիտի հաստատէ թէ՛ խաւ են թէ խաւ. ձգենք որ խօսի առանձնակի ինծի հետ :

Ֆիզիքական եւ գգայարանք. — Կազմերնին բոլորովին քաջառողջ, քանի որ Գարա-Աղաճի ջուրն և օդն ալ կը վայելեն միանգամայն, որով սովուն ու չարքաշ և պընդակազմ, և մի և նոյն ատեն ալ խիստ ախորժակի տէր, այսինքն շատակեր, չէ՛ մի որ Օնան-Օղլուի ծնունդ տուած՝ ու իր ցեղակիցներն են, իրանին միջնասակէն վեր և բարեձև նորաձեւութեան յարմար, և վայելչապէս դարգարուած, քանի որ Բերայի նորաձեւութեան ազդեցութեան մէջ կը գտնուին և ատաղձնին ալ հոնկից կը հոգան, շատ ժամանակ այլուր դառնուած տեսնին Բերայիական հովիւր կոտանան և նոյն իսկ կեղծ Բերայի կըլլան, որովհետեւ անկից աւելի փառք մը չեն ակնկալեր, այդ է սկզբունքնին, մասնունին, դաղափարնին ու խոէալնին, (այս բոլոր բաներն ալ իրենց առաւական լայն իմաստով ըմբռնուած) :

Բերայի գլխարկավաճառք շատ դժուարութիւն կը քաշեն յարմար բան մը տեղաւորելու զլուխնուն, և իրենք ալ սոյն անպատեհութեան համար առատաբար կը վճարեն : Գալով տոտիկներուն, չինացեաց նախանձը գրգռելու չափ մինիսիկ ? հակառակ անխնամ ձգուելուն ! և կօշկավաճառք, սոյն գործին ի դիւրութիւն, և նախանաւանդ օրիորդներու ազդու և կըտրուկ բողբոքներուն վրայ (ի պահանջի հարկին սպառնալիք ալ կընեն) Ձինաստանէն և ճարօնէն à haute nouveante այսինքն չին-ճաբօնէ կաղապարներ commaudlé պիտի ընեն :

Կարեւոր. — Կօշկավաճառներն ալ Բերայինը պէտք է հասկնալ, քանի որ իրենց բոլոր պէտք եղած նիւթերը հոնկից կը գընեն :

Ձեռքերնին, միջուկէն վեր, խոշորէն վար, կանթ մը յարմար դնելու համար, վաճառողին հետ մէկտեղ արիւն քրտինք կը մտնեն, կօշիկէն աւելի ձեռնոց կը հինցնեն, զարմանալի և տարօրինակ չէ՛ . . . :

Իսկ ականջնին այնքան ձեւաւոր կերտուած, որ չեմ կարող տկար գրչովս նկարել, այո, Խաւգիւղցին իր ականջովն է որ կը պարծենայ ու կը փայլի, ամենաճարտար ոսկերիչ մը հազիւ պիտի կրնար փափուկ օրիորդին օղ մը պատշաճեցնել :

Ֆիզիկոսական . — Ահա ամենէն փափուկ ու դժուար խնդիրը , քանի որ նոյն իսկ լուսանկարչութեան մէջ , այդ մասն է որ կը փնտռուի , այժմ գանձ վեր ի վերոյ պատկերացնել , սե սե թուի յօնքեր , զոր ոչ մէկ նկարիչ կարող է բնականին պէս գծագրել , այսքանով բաւ է հասկնալ իր գիւթիչ դերը , սրանկիւն մինինիկ քիթիկ մը , երբեմն ալ սրառզղանկիւնաձև կասկարմըրուկ խնձոր , երբեմն նուռ այտեր , թըխորակ կսկլորիկ (երբեմն ձուածէ) դէմք մը , ուր դրուած են երկու կըր փայլուն աղամանդներ (որոնց աչուկ անունը կուտան) յօնքերուն տակ , պղպեղ թարթիչներով , որոնց մէջը շարժուն չինական մեղանէ սե գնտիկներ , որք երբեմն կապուտակ կեւեւայ թէ Բեաղըտխանէի կապոյտէն փոխ առած են , մազերնին ընդհանրապէս խարտեաչ և դանդուր , խնամով սանտրուած և դէմքին վրայ յաճախ բարակ բրնձափոշի մը ցանուած չնչմարուելու աստիճան ? . . . :

Նայուածքնին , բաւին բովանդակ առու մով այնքան զօրաւոր , շանթահարիչ և թուփիչ , որուն ենթական անպատճառ անքնութենէ կը վարակուի , իրենք զեղեցիկ ըլլալէ աւելի շիրիմ են , այնպէս որ առաջին տեսնելուդ սիրտդ կը ճեղքեն ու մէջը կը դնեն , դէմքը հողիդ կ'աւելիո՞՞նէ , իսկ ձայնըն ալ էութիւնդ կը խռովէ , բոլոր այս բարեմասնութիւններով մեկտեղ այնքան խիստ կը գտնուին մարդ արարածին հանդէպ , որ իրենց ակնարկին իսկ չարժանանար , հակառակ իրենց գլխով սիրտ մը ունենալուն՝ արտաքուստ անմատչելի , ներքուստ գրաւելի , ի հեռուստ պաշտելի և յարգելի , իսկ ի ներկայութեան համակրելի :

Գանք այժմ ամենակարեւորին , բերանը զոր Աստուած չինած է՝ վասն փառաքանութեան և օրհնութեան , եկո տես որ հակառակ շնորհալի բերան մը ունենալուն բոլորովին ապերախտ են անոր հանդէպ , այսինքն շատ հազուադէպ է որ զիրար գովեն կամ բարեխօսեն , այլ յաճախ բամբասանք ու հաճակառութիւն կ'ընեն :

Մտաւորական . — Հակառակ անցկալին մէջ այնքան կարող անհատներ ծնւելուն , այժմ բոլորովին խոտան մնացած է ուսման տեսակէտով . գրեթէ ոչինչ կարծեն , դէթ իւրենց նախնեաց փայլուն վիճակը կորսնցնելուն ցաւէին , ու նախանձաւ ընթացք մը ունենալով՝ արդի կայութիւնին բարեփոխած կըլլային , բայց եթէ չիտակը խոստովանիլ պէտք ըլլայ , յանցանքը իրենցընէ , որ խաբխուէր և անբնական կեանք ըլլայ , որոնք քանի որ խաբխուէր էր և անբնական կեանք , որով քանի որ այժմ ի հիմանց դրանց նորոգուելու , մազթենք որ նոր դպրոցով՝ նոր դարկ և ոգեւորութիւն ստանալով յառաջիկային ներկային բոլորովին հակադասութիւն ցուցադրէին :

Կրօնական . — Որչափ որ մտաւորականին յետադեմ է , կրօնքը նոյն համեմատութեամբ զօրաւոր , այնքան լաւ դրոշմուած է այնպէս որ մահը իսկ չէ կարող խախտել , եկեղեցին իրենց ուխտատեղին է , հոն է որ կը դիմեն ցաւոց դարման դտնելու , այն իրենց հոգեկան բժիշկն է :

Եկեղեցին սիրելուն իբր աղայոց , երբ պատշաճ արդուդարդը չունենան դիմելու , եկեղեցիին պատին քսուելով և խունկին հոտը առնելով դրանք ժամկոչին մոմ մը վառել տալով կը դոնանան : Այն իրենց իղձերուն օրբանն է , հոն այնքան խորին մտածութեամբ կը սեւեռին դէպ ի խորանը , որ մարդ կուզէ հասկնալ հետաքրքրուելով թէ՛ ինչ է իրենց փափաքը , բայց քիչ մը քննելով պիտի կրնանք հասկնալ թէ՛ իրենց միտքը երկու նպատակով գրաւուած է , նախ իր ծնողաց դործին յաջողութիւնը , և որդիական պարտականութեանց մէջ ամենուէն չթերանալ , երկրորդ՝ իրենց իտէպը , այսինքն մտացածին էակը , որ ատեն այն ալ՝ նոյն պահուն , նոյն սրբավայրին մէջ մէկ կողմ , նոյն փափաքով տոգորուն , երկու զածութեամբ կաղօթէ մի և նոյն իղձով առի ի երբեմն ալ չնչմարուելու աստիճան հայեացքը դէպ ինչ ուղղելու , ո՛հ , ինչ դժուր է սոյն կեանքը , երկու մարմիններ նոյն նպատակով մէկ հոգիի տակ աւանձնացած՝ կոչերնին առ Աստուած , որ վերէն խնդակցելով օրհնութեան բուրմունք կը շարժէ և խնդիրքնին կը կատարէ : Մոռցայ իմաստի իրական ձայնաւոր աղջկանց մասին խօսելու , հոգ չէ թէ Գալթայեան որբանոցներ ըլլայ . չկայ երեկոյի մարմին մը որքան իմաստիւղութիւններուն , ներկայ գտնուելու :

առիթը ունեցած էր, անոնց Տէր ողորմեան լսելու պատարագի պահուն, որքան յուզիչ և շինիչ է այն. ամենէն անհաւատին հոգւոյն անդգայ թելերը խոկ պիտի թրթռին և մեղան ալ անմիջական պիտի ըլլայ, նաեւ դարմանալի դուգադիպութեամբ մը (թէ-պէտեւ նիւթին դուրս) տեղւոյն քարոզիչ կարգուած էր Տ. Տիրայր վարդապետ Մարգարեան, որուն ձայնը այնքան թրթռուն ու փափուկ, և որուն ծաղրաբանականը ըրած էր կարծեմ Արակունը շարաթաթերթիդ մէջ:

Եկեղեցիին աւարտումէն յետոյ պիտի տեսնէք զանոնք խումբ խումբ վերադառնալին, իւրաքանչիւրը իրարու պատմելով այն օրուան զգացած տպաւորութիւնը, քարոզին և արարողութեան ազդեցութեամբը որքացած ու ազնուացած, հոգ չէ թէ մինչև տուն երթայ նէ, անկից անդին ամէն ինչ պիտի մոռնայ անպատճառ:

Նկարագիր-Բնոյթ. — Այս երկու բառերուն մէջը կը սահմանափակուի ամէն ինչ. Խառնիւղի օրիորդները յամառ ու էական աշխատանքներ են, քանի որ զօրաւոր շիջերու տէր են, զոր բանակուիւի համար այնքան ճարտարօրէն կը գործածեն՝ որ նոյն խոկ սոխակները կը զմայլին! Բայց գանք ամենէն աչքի դարձելիք կողմին, զիրար անհամեմատ կերպով բամբասելին է, ինչ որ բնական է թէ նախանձէ ծնունդ կառնէ, և որուն հիմն է անտարակոյս իմինս, քուկինդ, անորը, իրենը, այսինքն իրար չի քաշելին, շատ ատեն իրենց աչքին գերանը անտես առնելով՝ դիմացինին չիւղը կը տեսնեն. իրենց ժամադրաւայրը ու ճեմելաւայրը Գարա-աղածի լեռն է, հոն իրենց պատկերները կը տեսնուին, այսինքն ինքզինքնին կը ցուցադրեն, կը տեսնուին ամուսնացեալներ, որք իրենց ամուրի քրոջ անպատճառ բան մը յաջողցնելու կը ճգնին միջնորդի դերը կատարելով, ամուրիները բնաւ բէտինկութեանը չեն ախորժիր, վա՛յ անոր որ կեղծ ամուրի ձեւանալով զանոնք կը խաբէ, աւելի լաւ է մէջ մընալ դիւզ չգայ, եթէ փառաւոր սփոց մը ուտել կը փափաքի:

ՊԵՏՐՈՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՆՈՐԱԶԵԼԻԹԻԵՆԸ ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՄԷՋ

Գաւառացին կը սիրէ նորաձեւութիւնը. մանաւանդ որ քանի մը անգամ բաց բերան զրոտած է Կ. Պոլսոյ հրապարակը: Երբ վերադառնայ Պոլսէն դաւառ, կարծես նորաձեւի շրջանաւարտ մը դարձած, կսկսի նորաձեւութեան քարոզներ կարդալ ու բաւարաններ չինել:

Առաջին անգամ ըլլալով իր տան շրջանակը կըսկսի նորաձեւութեան հովեր առնել, այնպէս որ իր կինը, ու նազելաչուք օրիորդները բոլորովին փոխուած են հիմա: Օրիորդներուն մազերը պօմպէ, կոնակնին բկլբկն, գլուխին վէլօ, ու ոտքերին կարմիր պօթ կամ սկարբին, տան տէրն ալ հագած է բէտինկօթ մը՝ անյարմար ձեւով, կոկորդը վիզնոց մը, որ վիզին իւր արգելարան, անկարող երկու կողմ դառնալու. նոյն ատեն փողկապը մէկ կողմ ծռած այսլանդակ կերպարանափոխ մը, որ կը տեսնես դէմք (անշուշտ զանց ընելով օրիորդներուն ու կնոջ անձուկի քաղաւածքները ու ձեւերը) ասոնք ճիշդ ներկայացնեցու համար Փափաքեան հոս ծնած ըլլալու էր և կամ անարժանա անոր շրջանաւարտ ըլլալու էի: Ինչ որ է մեր կարողութեան համեմատ ջանաք ներկայացնել:

Մեր նորաձեւ գաւառացին իր ընտանիքով կելլէ ճամբայ, ու վիզը մէջ մը ասդին մէջ մ'ալ անդին դարձնելով՝ կը մտնէ եկեղեցի, հանդիսականաց ուշադրութիւնը գրաւելով իր վրայ անշուշտ:

Մէջ մ'ալ նայիս շարթուան մը մէջ գաւառի նորաձեւերը ամէն կողմ կը կաքաւեն էրկէմիշ լէյլէկի պէս: Օրիորդներ հագած են երկայն բէշերով շրջադեպտ, որոնց բէշը աւելի պաշտօն կը կատարեն արդուկելով գետնի ցեխն ու փոշին: Գլուխին պօմպէ են չինած, սակայն կոկորդն որ իրենց չինած պօմպէն գոնէ ամիս մը երթայ, ասոր համար հինգ վեց հատ ուսնար կը խոթեն անոնց վրայ:

Շրջադեպտին վրայէն հագած են փէլըրին մը, որուն մէկ փէլը մէկալէն երկայն ու ձեւով տարբեր, մէկալ կողմէ ալ բաց կը ձգեն կուրծքը, որպէս զի վիզերնին եղած ոսկիները երեւան գան ի մէջ այլոց:

Ամառ օրով մանթօ կը հագնին, որպէս զի եղերքի մուշտակը ամէն ոք ահմէ է իր հարուստի աղջիկ ըլլալը երեւան գայ: Ճամբան քաղելու ատեն շատ դանդաղ կը քալեն, որովհետեւ շուտ քալել դործերնուն չ'գար, եթէ շուտ քալեն՝ չըջաղդեստին բէշը կը կոխեն անշուշտ:

Երբ փողոցը երիտասարդի մը հանդիպին, իսկոյն կը փախչին և զրան կամ պատի մը ծակէն կսկսին երիտասարդը դիտել:

Գաւառացի օրիորդները պարելն ալ կը սիրեն, բայց վալս եղանակին բոլոր ու ուշտում գաշտում եղանակին սօթիս խաղալ կը փորձեն: Եւ խաղի ատեն այդչափ ամուր կը փաթթուին երկու օրիորդներ իրարու՝ որ կարծես գնդասեղով միացուցած ես իրարու: Սակայն անակնկալ պարագային չըջաղդեստին բէշը վար կիյնայ առանց մէջինը հոգալու, որովհետեւ լաւ ամրցուած չէ գընդասեղով: Ասկէ անբնականը ըսեմ, մազերուն կէսը հիւսուած կէսը պօմպէ, ու չըջաղդեստին վրայէն ալ սեւ գոգնոց մը կապած է հանդիսաւոր օրերը պատուելու համար:

Դեռ ասոնց նման շատ մը անվերջանալի գաւառի նորոյթներ. սակայն վստահ չենք որ «Հանրագիտակ» պատուարժան թերթը պիտի բարեհաճի իր էջերէն զոհել:

ՀՐԱՆԴ ՍԵՎՏԱԵԱՆ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ուրախութեամբ կը ծանուցանենք քեզին. Կայսր գնահատելով Տպագրական Տեսուչ Վսեմ. Քեմալ պէյի բարեւոյ պատգամաւարութիւնը, բարեհաճած է Պալայի աստիճանը ցնորհել Ն. Վսեմութեան:

Նոյնպէս, հաճոյսով կը ծանուցանենք քեզին. Տեսուչական պատգամաւարներէն Ապս-իւլ-Վեհապ պէյ Տպագր. Տեսուչութեան դեր-Տնօրէն անուանուած է ի վարձ իր գնահատելի պատգամաւարութեան:

Խմբագրութիւնս կը փութայ իր ջերմ ցը-նորհաւորութիւնները մատուցանել իրենց ցը-նորհուած այս Բարձր գնահատման ատրի:

ՀԱՐՍԱՆԻՔ

Երկուշաբթի օր, Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցիին մէջ կատարուեցաւ Աղն. Յետեւ էֆէնտի Շամտանճեանի աղջկան Օր. Հայկունի Շամտանճեանի պսակադրութիւնը Ջգօն էֆ. Խորասանճեանի հետ, կնքահայրութեամբ փեսին հօրեղբոր Աղն. Խաչիկ էֆ. Խորասանճեանի:

Շամտանճեան ու Խորասանճեան ընտանիքները մայրաքաղաքիս ընտրելագոյն դասակարգին պատկանող գերդաստաններէն ըլլալով, երկուսն հրաւիրեալներու ընտիր բաղմոթիւն մը, շքեղ և աչքառու արդու-ղարդելով, փութացած էր ներկայ գտնուիլ Ս. Պապի խորհուրդին, որուն նախագահեց Տ. Օրմանեան Ս. Պատրիարք Հայրը իր շուրջը ունենալով Տ. Երէցեան Սրբազան, Տ. Տ. Բաբգէն, Տիրայր և Ղեւոնդ վարդապետները, ինչպէս նաև բաղմոթիւ քահանաներ:

Եկեղեցական արարողութիւնները աւարտուելուն՝ հարմուկները առաջնորդուեցան Սրբանոցի, ուր ձոխ շքասեղանի մը շուրջ առարկայ եղան պատուասիրութիւններու:

Օր. Հայկունի Շամտանճեան, այժմ տիկին Ջգօն Խորասանճեան, մայրաքաղաքիս Հայ իգական սեռին մէջ իրաւամբ պատուոյ տեղ մը կը գրաւէ իր ընդոթին ձիրքերով, իր շնորհալիութիւնով և մանաւանդ իր ստացած զարգացումով ու դաստիարակութեամբ, զոր ջամբած է իր ազնուամեծար հայրը Յետեւ էֆ. Շամտանճեան: Իսկ Ջգօն էֆ. Խորասանճեան ծանօթ է արդէն իր պատուաւոր վաճառական որ ժառանգած է կատարելապէս իր հանգուցեալ հօր Ալիքսան էֆ. Խորասանճեանի բարեմասնութիւնները:

Խմբագրութիւնս այս ուրախ առթիւ իր խնդակցութիւնը կը յայտնէ ջերմապէս Շամտանճեան և Խորասանճեան ընտանիքներու, և իր շնորհաւորութիւնները կ'ուղղէ նորապսակ ամուսին:



ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

«Ի՞նչ է քաղաքավարունը, ուրիշի մը համար նեղուիլ» ըսած է մեծանուն երգի-ծաբանը Յ. Յ. Պարոնեան, որուն ջրախը անուանած էր զիս անոր ջուջուռ հետեւողը։

Եւ իրաւացի է այս պարագան։ Ի՞նչ որ քաղաքավարութիւնը կը պահանջէ, ան-պատճառ բնականէն, սովորականէն դուրս նեղութիւն մը, անհանգստութիւն մը, վեր-ջապէս զոռովիկն կատարուած բան մըն է ան, որ մարդ կը կատարէ ի հարկէ ստիպեալ։

Քաղաքավարութիւնը հնարողը եթէ ոչ կիները՝ դէթ զանոնք հոգով մարմնով սի-րողները եղած են, քանի որ անոր ամէն ձեւերուն մէջ կիները մատ և մաս ունին, ուր որ կին մը գտնուի, քաղաքավարական բոլոր տեսիլքիկն ընող ձեւերը միահամուռ հոգ կը ժողովուն, կարծես զմարդ, այսին-քան էրկամարդերը անհանգիստ ընելու հա-մար։

Թուելով չի հատնիր, յիշելով չ'աւարտիր այն կարգ մը նեղութիւնները, անհանգս-տութիւնները, զորս ամէն օր կընենք կը-լանք այդ չըլլալիք կիներուն համար, և անոնք միշտ քիթերնուս խնդալով, գլուխ-նին երկու սանթիւմ կը ծռեն, ոչ թէ ի նշան չնորհակալութեան, այլ լոկ «պարտկերնիդ է» ըսել ուզելու մտօք։

Ամբողջ կամուրջին արեւը ծծելէ և ջու-րերու պէս քրտնելէ վերջ, թիւնէլ կը հաս-նիք, տոմսակնիդ առնելով հազիւ հակա-փորցու մը անդ կը գտնէք, տիտիկ ընելով քրտինքնիդ սրբելու համար, լաբ՝ եռմուռ-ճախին մէկը ներս կը մտնէ, աղուոր ջիւրքիկն խնդիր չէ, և որովհետեւ քաղաքավարու-թիւն ըսուած բանը ուրիշի համար նեղուե-լուն մէջ կը կայանայ, ոտքի կելլաք տեղ տալու համար տիկնոջ կամ օրիորդին։

Երկու տամաներով նաւակ մը կը նստիք, տամաներուն տարիքը խնդիր չէ, բաւական է որ Եւայի թռուներէն ըլլան, անոնք կը բազմին լայն և չիտակ կողմը, մինչ դուք թիավարին թեւակները փառաւորապէս կու-

տէք կիւմպիւռ կիւմպիւռ, առանց ուժ մը ըսելու դիմացի կողմին։

Սալօնի մը մէջ կը գտնուիս կնոջ հետ, բոլոր զիւս միւսիւնները քաղէ միւշտիկի զը-տածնուն վրայ խելագարած, կսկսին հաղար քօմըլիմանները մէկ փարայ մեղուի պէս բզզալ բոլորտիքը, և դուն հակառակ խիտ նախանձոտ մը ըլլալուդ, հեռուէն թուքերդ կը կլլես առանց համարձակելու նոյն իսկ ան կողմը նայիլ։

Ընտանեկան ճաշի մը հրաւիրուած ես, սեղանը կազմ ու պատրաստ, տան տէրը կանանց հաճոյ երեւնալու համար իճատ մը կը յղանայ, ու կըսէ թէ՝ «առաջ տամա-նները պիտի ճաշեն և քալալիկները պիտի սոյասարկին» հակառակ փորիդ մէջ ամպեր գուռալուն, ոտքի վրայ, հոս հոն, անոնց պատառները կը համրես, աչքերդ դուրս իյ-նալու աստիճան անօթի, և ի վերջոյ կը նստիս քեցիքիկն խռընթըն լալիլիղելու։

Դեռ թուեմ այն անտանիլի նեղութիւն-ները, որոնց ենթակայ կըլլայ մարդ ի փառս քաղաքավարութեան և ի պատիւ կիներուն, միշտ անոնց երեսէն, անոնց համար։

Փաղափար մը տալու համար քաղաքս-վարութեան վեհաժողովուն վրայ, քիչ մը վա-րը պիտի նկարագրեմ ընտանիքի պէտ մը, որ կը չարչարուի յանուն քաղաքավարու-թեան, և աս ալ կնոջը երեսէն։

Կուռնիկ աղա տիւգ պատուը մէկն է, ա-մուսնացած՝ աղջկանց բարձրագոյն վարժա-րանէն վկայեալ օրիորդի մը հետ։ Թէեւ այս անյարմար միութեան հաւաստ չընծայուի, սակայն Կուռնիկ աղայի բարեկեցիկ կեան-քը, և տանը մէջ իր առանձնութիւնը ամէն բան մէկդի թողած էին, և ամուսնութիւնը կատարուած։

Կիրակի առաւօտ է։ Կուռնիկ աղա ըստ սովորականին, կուգէ անկողինէն ելլալուն գիշերնոցով վարի սենեակին պատուհանին առջև նստիլ ու հոն ֆոթիլ իր սուրճը։

— Ի՞նչ կընէս, խօսք կառնէ տիկինը,

անկողինէն ելլալ և անմիջապէս չի հագուելի . . . տէր ողորմեայ ըսէ . . .

— Ով կայ, վարը միտաֆիւր կայ սալօնը, ի՞նչ տէյի մուծնու լուսուն մէկէնէն մտնամ . . .

— Չըլար չըլար ամօթ է, քաղաքավարութեան դէմ է, պէտք է անմիջապէս հագուիս . . .

— Պէ կընիկ, մենք մեզի ե՛նք, իրարու խղճ ընկու չե՛նք ես . . . չօգ չէ՛յ . . . ձգէ քի ստնի վարի օտան իշնամ տէ քի մը հովթփիմ . . .

— Չըլար ըսինք ես, առաջ սա պօթերդ հագի նայիմ . . .

— Պէ պապամ նասըրսս պիտի կտրեմ տահա, ատ խառնախոսները հագնելուս պէս աչքերս դուրս կիշնան կոր . . .

— Քաղաքավարութիւնը կը պահանջէ որ առաւօտուն մարդ հագուած կոկիկ դուրս ելլայ ննջասնեակէն . . .

— Ծօ պու նէ՛ իշ տիր . . . քա ճանըմ ինչո՞ւ ինքըլինքս էղիյէթը դնեմ . . . կընիկ վաղ անցիր, ատ ըսածներդ մեզի կէօրէ բաներ չեն . . .

— Պէտք է գիտնաս որ քաղաքավարութիւն ըսուած բանը միշտակ օտարի համար չէ, այր և կնոջ միջև ալ պէտք է զոյուութիւն ունենայ, գքեղ նէկլիթէ վիճակի մէջ տեսնել տգիւ կերեւայ ինծի . . .

— Էյ պապամ, ատ առաջուրնէ մտիւրտայիր տէ չիք միւսիւ մը ճալակողտիւր . . . քառսունէս ետքը իմ ուտելու սպուրս չէ . . .

— Անհամաձայնութիւնը չուտով կը յարդարուի իթէ տեղի տաս, յարգելով կինդ և անոր խօսքը . . .

— Հէյ նալլէթ քէօւ չէյթան, ինչ սե սահաթ է եղեր քի կլոխ կլսու ենք տուէր, ըսելով խեղճ մարդուկը կեւլայ և վիզիթայի երթալու պէս ոտից ցգլուխ կը հագուի . . .

— Ինծի նայէ մատամ, քի մընալ լէվանտա տուր քի պըյըմներուս իլէն մանտիլիս քսեմ . . .

— Քեղի քի մը օ տը քօյօնէյը տամ երեսներուդ քսէ . . .

— Քաղաքավարութիւնը անանկ կուզէ կոր . . .

— Առողջապահիկ է . . .

Ու երբ չատկեկ մը կսկսի քսել . . .

— Ո՛ւֆ . . . ծօ՛ երեղիւմ . . . ծօ՛ ետուտաթըմ . . . վախ կուռնիկ վախ . . . քասա խառնախառն քէզուպ չըլլամ . . . ծօ՛ երեսներս . . .

— Նա՛ ջուր դարի քի մը . . .

— Ծօ աչքիս . . .

Վերջապէս խեղճ քաղաքավարութեան զոնը կը սրբուի ու վար կիշնայ, անիծելով քաղաքավարութիւն ըսած օրէնքը որ զինքը կը նեղէր . . .

Յերկուան մօտ իրենց տան դուռը կը զարնուի, ճիշդ այն պահուն, երբ սեղանատուն երթալով կերակուրի պիտի նստէին, Երիտասարդ բարեկամ մը, մատամին վաղածանօթ գլուտացու մը, օձի պէս գալարուելով ուրուելով ներս կը մտնայ սենեակէն, և տիկնոջ հետ կսկսին անգղիերէն տեսակցիլ . . .

Կուռնիկ աղա որ լեղուէն չէր հասկնար, ապուշ ապուշ կսկսի նայիլ երեսներն, անշուշտ յարգելու համար քաղաքավարական օրէնքը, որ լուծիւն կը պահանջէ նմանօրինակ պարագայներու տակ . . .

— Լէք գլօ քու տի կառտըն մայ տիռ, իմ եու բլիգ . . .

— Օյ ուայթ, ուիթ բլիծուտ . . .

Եւ առանց բռն մը արտադանելու ամուսնոյն, մատամը իր երիտասարդ հիւրին հետ պարտէզ կ'ելլան . . .

— Բսխեր եմ աս քաղաքավարութեան մէջը, եւտիի խալթլարընա պագ սանքի, մենք հոս մա՛րդ ենք մի, խօսխուրճիս ենք մի ո՞վ է ատ հէրիֆը, ըսելով ինքն ալ դուրս կեւլայ ու ցած ձայնով կսկսի կիւրը կանչել . . .

— Ի՞նչ է ճանըմ, ի՞նչ կուզես . . .

— Պէ պապամ, ի՞նչը ի՞նչ պիտի ուզեմ, ներսիդիս ողջուն կուտայ կոր, աս հէրիֆը ի՞նչ տէյի առեր կը պտուտցնես կոր, ձգէ երթայ տէ կերակուր ուտենք . . .

— Տէր ողորմեայ . . . քաղաքավարութեան դէմ մի խօսիր, մինչև որ հիւրը չերթայ չենք կրնար սեղան նստիլ . . .

— Էյ թամամ . . . ըսել է քի երթալուն պիտի պէքէյէնք, հա՛ . . .

— Ըստ քաղաքավարութեան օրէնքին, հիւր մը գտնուած ատեն չեն ճաչեր . . .

— Ես ատ հերիժը կերեր խմեր եկեր է նէ . . .

— Կէս օրին դեռ ժամանակ կայ, մինչև կէս օր պէտք է սպասենք . . .

— Էյ դուն ատանկ առջիդ ձգես էյլէն տիրմիշ ընելու համար պտուտցունես նէ, չէք կէս օր, կէս գիշեր պիլէ կըլլայ . . .

— Սո՛ւա . . . լռէ, պատշաճութիւնը այսպէս կը պահանջէ . . .

— Մօ՛ պունէ ծուն տըր պաշտման կէտի . . .

— Այ պէկ ետո բառտըն միտըս, այ ուիշ բու բու ետո մայ ճրոնէյ . . .

— Օյ ոայք . . . սիր դառն իՅ ետո բըլիզ . . .

— Կընիկ մարդը միտըս ֆիլան կըսէ կոր, աճապ ֆուռունը պուտ է տուէր տէ հիմա չըրախ ետեւէն պիտի բերէ՞ ինչ . . .

— Լռէ, տղան իր ճամբորդութեան պատմութիւնը պիտի ընէ . . . հիմա դուն ալ կուզես նէ եկուր մտիկ ըրէ . . .

— Ի՛նչ . . . ճամբորդութիւն մի . . . քո չըսես քի ձմեռ գիշեր մը հրամմէ տէյի, ա՛մա օրով, կէս օրին չէյրէկ մը մնացած ատ պիշիմը մասալ մտիկ կըլլուի՞ անօթի փօրանց . . .

— Կարելի է կարճ պատմութիւն մընէ, քաղաքավարութիւնը կը պահանջէ որ նըստիս մտիկ ընես . . .

— Ինծի նայէ ես քեզի բան մը ըսեմ, գիտցած եղիր ճամբորդութիւնը նախ ըրած ատենը երկնցո՛ւնէ նէ, վարօս է մի, չըմէն տըֆէն է մի, պաճախէն պունելուս պէս դուրս կը քաշեմ . . .

— Վո՛ւյ . . . սա նայէ, մեռնիլս կը փափաքիս . . .

— Բա անօթի եմ չե՞ս հասկնար կոր, նասըլ ըսեմ քի հասկնաս, հայ քառա պսակ կէչէյիտի պաշտմըդտան . . . ծօ նէ փորձանքա ըռաստ կէտիք, փարամ ըլան խեղճ օլմուշըմ . . . ըսելով ներսը կսկսի սլքտըկալ . . . մինչ կինը այս տեսնելուն,

— Ինծի նայէ Կուռնիկ աղա, հայտէ դուն ներս գնայ, չէնէ եկուր քովերնիս նստէ, քաղաքավարութեան դէմ է ըրածդ, ատանկ չօպանի պէս գլխու վրայ չեն պըտըտիր . . .

— Էյ ալթըխ խալթ ըրիր ատ տեղը . . . ատ ըսածդ չպիտի կրնամ ընել, քաղաքա-

վարութիւն չէ քի մահայու մեղք ըլլայ նէ պիտի կենամ . . . սօնը սօնը ատ մուրն ալ ճակատս պիտի քսէք քաղաքավարութիւն է տէյի . . .

— Ի՛նչ կըսես Կուռնիկ աղա, տղան ի՛նչ միտքի կերթայ հիմայ . . .

— Միտքի երթալուն, թող վախտին տունը երթայ տէ էլ ալէմը պաղըռալս վէրէմի չընէ . . . եէտիի հալթա պագ, անօթի սատկիմ պիտի, ատ հերիժին ճամբորդութեան մասալը մտիկ ընեմ տէյի . . .

Մինչ այս մինչ այն խեղճ Կուռնիկ աղա, յաղաքս քաղաքավարութեան կըսպասէ ու կըսպասէ պարտէզին անկիւնը մինչև ժամը վեցը, երբ եանքի ա քալալի միւսին զըլխարկը օդերը, գետինները ճոճելով կը մեկնի:

— Հրամմէ տէ կերակուր կեր հիմա, կըսէ սրտնեղած ամուսինը տիկինին, որ դեռ հիւրին կունակն ի վեր կը նայէր փողոցի երկայնքը:

— Նայէ հիմա կրնանք ուտել, բայց հիւր մը գտնուած ատեն . . . ա՛ս քաղաքավարութեան դէմ է . . .

— Տա պիշիմսիզ անունը մի տա՛ր, սընըրներս ոտք կելլան կոր, հայտէ նստինք տէ երկու լօխմա բան ուտենք, դէրէ սատկիլս հիչ բան մը ըսել չէ . . .

Ճաշէն վերջ երբ սովորական սուրճերը կը ֆըռթեն, Կուռնիկ աղա կերած կերած կուրէն աւելի տաքէն յափրացած, քիչ մը քնանալու փափաք կը յայտնէ:

— Ի՛նչ քնանալ մի . . . մեղայ ըսէ, կիրակի ցորեկները քնանալ կըլլայ . . . տէր ողորմեայ . . . ատ ի՛նչ անքաղաքավարութիւն է . . . հիմա հիւր մը գալու ըլլայ նէ . . .

— Էյ քեզի բան մը ըսեմ մատամ, մենք չպիտի կրնանք ապրուիլ, ասոր մէկ չարէն մտմտանք, փսխեր եմ ատ քաղաքավարութեան մէջը . . . զոռովէն ըռահաթս կաւրես կոր . . .

— Ըլլալու բան չէ, դուհիկ բան է ցորեկ քնանալը, մանաւանդ կիրակիները . . .

— Համմէ . . . խուշիկ . . . հրամանքդ ինծի կնիկ տէյի դէմա հանեցին, չէնէ մի վարժուհի . . . սա հասկնանք . . . չօգ չէյ . . . քա քունը աչքէս կը վաղէ կոր . . .

— Զըլլար ըսինք եա՛, հէմ ինծի նայէ .

եկէկիդ կոճակներն ալ կոճկէ, ըստ քաղաքավարութեան . . .

— Կընիկ տա անունը մի տար, սիրտս չառաւիչ կընէ կոր . . .

— Ես չեմ պահանջեր կոր, այնպէս պէտք է . . . պատշաճութիւնը . . .

— Էօֆ . . . ծօ՛ պունէ՛ տէրտ տիր Աստուած իմ . . .

Կուռնիկ աղայի քրտինքները ճակատն ի վար կը վազեն, և աչքերուն մէջ արիւնը կը խտանայ տակաւ, գլուխէն ալ շոգի մը կը բարձրանայ .

— Սա հալըս նայէ կընիկ, մեղայ, բանիւ գործով մեղք մը գործեր եմ նէ կը ներես, իզլին տուր տէ քիչ մը ինքզինքիս գամ, կեփիմ կոր . . .

— Քաղաքավարական օրէնքին դէմ մեղանշողին պատիժը համակերպութիւնն է . . .

— Երկու լուսը քէօնայ ան վարժուհիին քի, քեզի վրատ ատ հիւանդութիւնը բերէ . . . ըսելով կը համակերպի և հագուած սքուած պատուհանին առջեւը կանցնի կը նստի լուռ մունջ .

Երեկոյն ժամը տասնին մօտ, մատամբ առանց ամուսնոյն կանխապէս բան մը ըսելու, կը հագուի վար կիջնայ .

— Դուրս պիտի ելլանք Կուռնիկ աղա, քիչ մը օդ առնենք . . .

— Իչտէ աս տեղն ալ քաղաքավարութիւնը կը պահանջէ որ էրկանդ խօսքը մտիկ ընես տէ տեղդ ծանրը նստիս . . . զէրէ իմ մէտէս հիչ չուզեր կոր . . .

— Ի՛նչ կըսես ճանրմ, հագուեր եմ նէ . . .

— Քաղաքավարութիւնը կը պահանջէ որ առանց էրկանդ հրամանին հագուել չէ քի ֆուռքէթա մը պիլէ գլուխդ չի խօթես . . .

— Բայց ես դուրս ելլալ կուղեմ կոր, կիրակի է այսօր . . .

— Քաղաքավարութիւնը կը պահանջէ որ էրկանդ խօսքէն դուրս չելլաս . . .

— Ո՛ւֆ . . . սիրտս մի հասցներ կէնէ, կատակը մէկգլի Կուռնիկ աղա . . .

— Քաղաքավարութիւնը կը պահանջէ որ էրկանդ չուզած բանին վրայ չատ չի պընդես . . .

— Հիմա նորէն հանուիմ . . . ժամերով թուալէթ ըրի . . .

— Քաղաքավարութիւնը կը պահանջէ որ . . .

— Էյ հասկցանք, ասոր մէջը քաղաքավարութիւնը գործ չունի . . . կատակը ձեզէ, նայէ ամէն մարդ դուրս պտոյտի է ելեր . . .

— Նասըլ մատամս, խօշաֆիդ կերթայ կոր, քաղաքավարութիւնը նայինք նասըլ խումաչ է եղեր, հիմա դնայ հանուէ քի երթաս տէ սովրիս . . .

— Կուռնիկ աղա աս ըլլալո՛ւ բան չէ, դուն ատանկ ընութիւն չունէիր, բան մը ըսած ժամանակս անմիջապէս կը համակերպէիր . . .

— Իչտէ հիմա տիբլօմալը աչկերտ ելայ տէ խալֆա ելայ քեզի պէս վարժուհիի մը քովը, առաջ չիյտէի գլուխ սալլաթմիչ կընէի կոր, հիմա հասկցայ քի ի՛նչ է եղեր քաղաքավարութիւնը . . .

— Կարծեմ թէ հոս քաղաքավարութեան դէմ գործող մը չիկայ . . .

— Իչտէ հիմա դուն հագուեր ես, առանց ինծի հարցնելու, դուրս ելլանք կըսես կոր, առաջ ըլլար նէ հայտէ պիտի ըսէի, ֆախաթ հիմա քի հաթիմ պիթիմ ելայ, քաղաքավարութեան դէմ է ըրածդ, չիւնքիւ ես չէ կըսեմ կոր . . .

— Բայց այս ըրածդ քաշուելու բան չէ, Կուռնիկ աղա . . . կատակը մէկգլի, կը նեղուիմ կոր . . .

— Ես առտուընէ պէրի կը ճաթիմ կոր տէ ով ինսաֆ կընէ կոր, սա հալս նայէ մէյմը, շապիկս սըխմեմ նէ երկու մուշուքայ քրտինք կելլայ վրայէս . . .

— Աւելի աղէկ, դուրս կելլանք կը հօվա՛րիս . . .

— Բրանած եմ, կը մսիմ տէյի կը վախնամ կոր մատամս . . .

— Վերջը . . .

— Վերջը սա քօնչինային թուղթերը բեր տէ բառթի մը խաղանք . . . դուն սա կէ՛ճէլիկս բեր նայիմ, անանկ ալ դուրս չպիտի ելլանք անանկ ալ . . .

— Ի՛նչ, կէճէլիկ . . . վա՛յ վա՛յ վա՛յ կիրակի օրով կէճէլիկ . . . քաղաքավարութեան դէմ հէ՛ . . .

Կուռնիկ աղա տեսնելով որ որչափ պընդէր, ինքը պիտի տուժէր, ըսաւ .

— Ինծի նայէ կընիկ, եկուր խօսք մէկով սա քաղաքավարութիւնը վերցունանք

քի ես ալ ըսահաթ կէճէլիկս հագնիմ, դուն ալ ուղած ատենդ դուրս ելլաս, աս օր վաղ անցիր տէ պաշխա վախիդ կը պարտինք...

Մատամը պտոյտի սիրոյն կընդունի և համերաշխութիւնը կը տիրէ մէջերնին:

Ուշ ատեն, երբ այր և կին դէմ դէմի նստած կը խօսակցէին, զրացիններէն երկուստարդ մը կուգայ տուներնին, առարկելով թէ իրենք պտոյտի պիտի երթան, մատամն ալ եթէ կը հաճէ հետերնին երթայ...


— Ի՞նչ կըսես կուռնիկ աղա, այս երրորդ անգամն է կը հրաւիրեն կոր չեմ երթար կոր, երթամ...

— Պօշ բան է մատամ, նստեր ես նստէ սրտեղը...

— Բայց քաղաքավարութեան դէմ չըլլար այս ժխտական պատասխանը...

— Աստուած քեզ պահէ, մինք ատ լուռ էթը շատոնց թաղեցինք...

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ



ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻՋԱԿ

Վարժարանիս ի՛նչ տարեշաքն կըսկսի Սեպտեմբեր 6 ին (Ն. Տ.): Հաստատութեան Տնօրէն Վեր. Ռ. Չէյմպրս եւ իր Տիկինը արդէն վերադարձած են իրենց երկամեայ բացակայութենէն, եւ յառաջիկայ տարի ուսուցչական խումբին վրայ պիտի աւելնան Քանասայի մէկ նշանաւոր համալսարանէն երկու Ամերիկացի օրջանաւարներ, որոնց մէկը գլխաւորապէս պիտի աւանդէ առեւտրական դասընթացը:

Առաւելները ընտանեկան խնամք կը վաշտեն գիշերօթիկ ուսուցիչներուն, հաստատութեան մասնաւոր բժիշկին հսկողութեան եւ Տիկին Չէյմպրսի մայրական հոգածութեան տակ:

Գիշերօթիկ առաւելներուն տարեբոցական է 16 Օսմ. ոսկի, 8 ոսկին Սեպտեմբերի սկիզբը եւ մնացած 8 ոսկին Յունուարի վերջերք վճարելի:

Վարժարան յատուկ ուսուցիչ մը ունի գործիական երաժշտութեան համար, այս դասին համար տարեկան մասնաւոր վճարումն է 1 1/2 ոսկի Օսմ.

Աւելի տեղեկութիւններու համար դիմել Մր. Բիքի Պայպրի-Հաուս, Վ. Պոլիմ, կամ Տնօրէնութեան Պարտիզակ:

10—1

ՎՈՅՍԸ

Վարդ մ'ե անի դեռ նորաբայ հեռաբոյր, Հայիտակ վարդ փառք ու պարծանք Մայիսին: Որուն ծոյր դրնեն մեղուի գիրգ համբոյր. Երեսասարգ եւ կոյս բաղձան տնջով սին:

Պրննել անով իրենց լանջը կուտական, Կամ երբեմն գիրգ մասնեռով միտ տոյլ. Իւր քերքերը՝ ջինջ հոտաւէտ անըման Ըզգայագիրկ ըլլալ, բոյրէն անընել:

Սոխակ մ'ե այն սիրագեղգեղ միտ զուարթ, Պուրակներու սիրուն երգիչն մեմակեաց, Ու սիրէ միտ երգել անյագ սէր ու վարդ Ամբողջ ժամեր, իւր դալայլովը անլաց:

Որուն յուզիչ երգերն յաւերժ կը դիւրեն, Ունկընդիրին սիրն ու հոգին առ յաւէտ, Երբ ըսկըսի մեղամաղձոտ դճ, անէն Կերպով լանգ տալ իւր տաղերուն, տարփաւէտ:

Դաւենալ մ'ե այն մեղադաւենակ՝ ու անմեղ, Ու քրքրուայ խանդոտ խաղեր անձկադին. Գիրգ հրպուսին վարժ մասներու ամէն հեղ Շեւտովն աղու գիւնովընող մեր հոգին:

Որուն խաղերն մեր սրտին խոր կը մըման, Ո՛հ, նոյնութեամբ արձագանգող սրբերգին՝ Մեզի յիշել կ'ուսան իւր սէրն յաւիտեան, Սէրը հիւժող, սէրը պարգեւ երկընթին:

ԱՐՇԱԿ Դ. ԻՍՊԵՋԵՐԵԱՆ

PROFESSEUR ANGEL

Վկայեալ Բարիգի եւ Պեռնիկի
համալսարաններէն

Ամէն անոնք, որոնք կուզեն քիչ ժամանակուան մէջ, խիստ դիւրամատչելի պայմաններով հիմնովին սովորել Գերմաներէն լեզուն՝ ինչպէս նաեւ Ժրանտերէնը

ԱՌԱՋԻՆ ԱՌԹԻԻ

Կէտք է դիմեն Պանդե-գափու Բալուգաի Վաճառատունը, ուրկէ պիտի կրնան ստանալ հարկ եղած մանրա համալսութիւնները դասախօսութեան առթիւ:

10—6

[3]

ՀԱՄԱՌԴՈՒԹԻՒՆ

ԼՈՒԻ ԺԱԲՕԼԻՐ

ԿԱՊԻԿՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՁ

ՓԻՂԵՐՈՒ ԳԵՐԵՁՄԱՆ ԱՏՈՒՆԸ

Ամենքնիս մէկ պահուեցանք մայառութի մը մէջ, և ահա այն արտակարգ տեսարանը որ պարզուեցաւ մեր աչքին առջեւ:

Տասնեակ մը փիղեր տեսնուեցան բացատանին անդիլի ծայրը: Մէջտեղէն տաժանաքին կերպով կը քալէր հիւանդութենէ և ծերութենէ տկարացած հսկայ մը: Չայն փութացնել ստիպելու համար, իր ընկերները իրենց պատիճներով կը մտրակէին զայն: Դժբաղդը այսպէս իր նմաններուն գերեզմանը կը տարուէր...: Իր վերէն ուժերը կը գործածեր գալ պառկելու համար այն դարաւոր անկողնին վրայ, որ արդէն տեսած էր իր նախնիքին ոսկորներուն ճերմկիւր: Ամէն կողմէ բռնուած այս խեղճ անասունը երբ նպաստաւոր կարծուած տեղ մը հասաւ, իր պահապանները յանկարծ լքեցին զայն թեթեւ մը հրելով և անտառներու այդ հսկան որ գուցէ երկու դարէ աւելի էր որ կը շրջէր պանանիներու և հնդկարմաւինիներու շուքին տակ, գետին զլտորեցաւ ուրիշներէ աւելի ցաւազին և աւելի շառաչուն ուռնում մը արձակելով: Յետոյ սկսաւ հռնդալ, մաս հը կը մօտենար և ամէն կողմէ թուրակները, կաքանները և փոքրիկ սև կապիկները, որոնք ճիւղերուն վրայ հաւաքուած էին գլխերէն համար, կը փախչէին սարսափի ճիւղեր արձակելով, մինչ շնագայլերը իրենց ուրախ կոչերը լսելի կընէին թաւուտներուն ետեւէն: Ասոնք կ'սպասէին խեղճ կենդանիին մեռնելուն, որպէս զի զայն գային յոչոտել, խնջոյք կազմակերպել...:

Այն պահուն երբ փիղերը կը քաշուէին, լուսիւս որ բաւական առաջացած էր, անխոհմ շարժում մը ըրաւ և ահա կենդանիները տեսան մեզի բացատանին այն մասին մէջ ուր ապաստաներ, ծածկուեր էինք:

Անոնք մեր վրայ յարձակեցան:

— Կորսուեցա՛նք գոչեց առաջնորդը՝ Ֆէքուէ, որ իրեններէն շատերուն պէս քաջասիրտ չէր այս կենդանիներուն դէմ, երբ չի կրնար իր թունաւոր նետերէն մէկը մխել անոնց, ճարտարութեամբ ծածկուած փոսի մը մէջ ուր քանի մը անխոհմներ գլտորած էր:

— Հիմա ի՞նչ ընելու է, ըսի սրտայուզութեամբ Ուրանոյի:

— Պէտք է որ, պատասխանեց Պենէնցի պատերազմիկը, քարապինայի հարուած մը զրկենք ասիկայ կրնայ զանոնք սարսափեցանել, որովհետեւ անտարակոյս չեն լսած ու է հրազէնի մը ձայնը:

Բոլոր բեռնաբարձ գերիները իրենց բեռները վար դրած էին և ապաստանած ծառերու մէջ:

Միայն Պենէնցի զօրքերը, զէնքերը ձեռքերին, չէին շարժիր և հրամաններու կըստ պասէին:

Վարանդու տեղի չկար:

Նշան մը ըրի Բաթրիքի որ հրամայեց կրակել:

Վայրկեան մը ամբողջ գոռուն մը լսուեցաւ անտառը դնդացող. մեր մարդիկը առանց կենալու սպառնցին իրենց քարապինա-րէյվովէրներուն փամփուշտները: Բայց կրցանք ուրախութեամբ հաստատել թէ փիղերը նոյն պահուն իսկ կասեցան, վարանման քանի մը վայրկեանէ ետք, երբ դժոխային աղմուկը կը շարունակուէր, անտառները իրենց կոնակը դարձուցին յեղակարծօրէն և քիչ ատենէն անհետացան անտառին խորութեանց մէջ:

Առաջնորդը Ֆէքուէ որ կորսուած էր վտանգին պահուն, երբ եկաւ դարձեալ գտաւ մեզ, աներեսաբար յայտարարեց թէ ինքզինքը աղատած էր մեր շահուն համար իսկ:

— Ոչ մէկ բան, ըսաւ ան մեղի պաղ արիւնով, կրնար ես կեցնել սոսկալի գաղանները, եթէ անոնք ճանչնային թէ մեր մէջը կը գտնուի փիղերու մեծ որսորդը (ինքը) և ասոր համար էր որ պահուցեցայ:

Իրաւ ալ մեր Ափրիկեցին ցեղով և ընտանիքով փիղի որսորդ էր:

Բան մը չըսինք, քիթին խնդացինք միայն և ինք հասկցաւ թէ մենք իր պոռոտախօսութիւնները չափ չէինք տեսներ:

Վերսկսանք մեր ճամբան և տասը վայրկեանէն հասանք այն կայանը զոր որոշած էր մեր աւաջնորդը, գիշերը անցընելու համար:

Քաղելով հանդերձ կը խօսակցէինք քիչ առաջ ենթակայ եղած միջադէպին վրայ: Ֆեքուէ մեղի հաւաստեց թէ փիղերու բոլոր կայանները այսպէս իրենց գերեզմանոցները ունէին ուր կ'առաջնորդէին իրենց մեռելները պատիճի հարուածներով, ազատելու համար իրենց ցեղը հոտած գիւղերու տհաճութիւններէն: Երբ իրենցմէ մէկը մեռնէր յանկարծական կերպով, անոնք զայն կը քաշէին մինչև իրենց գերեզմանոցը:

Ֆեքուէ այսօր պատմելու ակորժակ ունէր և ես օգուտ քաղեցի իր այդ տրամադրութենէն: Իր լսած հիւանալի և հրաշապատում գէպերով հատոր մը կարելի է լեցնել և ես գիտեցի որ Ափրիկէի փիղերը այն բարձրին ու սովորութիւններն ունին զորս ունէին Սէյլանի ընդարձակ անտառներուն մէջ և Հնդկաստանի մէջ իմ տեսած փիղերս: Փիղերը կ'ապրին ընկերութեան մէջ և իրենց մէջ գլխաւոր մը կը ճանչնան որու կը հնազանդին կուրօրէն: Այս փիղերու ընկերութիւնը կատարելապէս որոշ օրէնքներ ունի: Միայն հիները, որոնք հեղինակութիւն ձեռք բերած են, իրաւունք ունին իրենց համայնքներուն տեղը փոխելու, երբ անունդը սկսի պակսիլ այն տեղերուն մէջ ուր փիղերը հաստատուած են: Անոնք են որ դարձեալ, ամէն իրիկուն, թալանուած, աւար առնուած արմատներն ու պտուղները հաւասար բաժինով կը բաժնեն իւրաքանչիւրին: Նախ անունդը կը տրուի գեւատի փիղերու, որոնք չեն գիտցուիր բնաւ, յետոյ մայրերուն և յետոյ արուներուն: Ֆեքուէ յայտնեց թէ այս բանը

քանիցս տեսած է: Ծերունիներուն համար ամենէն կակուղ խոտերն ու պտուղները կը պահուին և միւսներուն հետ մեկտեղ է որ կ'ստանան իրենց բաժինը:

Բնիկ որսորդին հետ կատարած դանաղան պտոյտներուն մէջ կրցայ հաստատել այս տարօրինակ պարագաներուն ճշդութիւնը: Նշանակելի պարագայ որ բոլոր պղտիկները համախումբ կը մեծցուն և ո'րչափ որ մայրերը կը ճանչնան իրենց սերունդը, բայց անխորթէն ծիծ կուտան նաև նոյն համայնքին միւս պղտիկներուն, երբ սակայն իրենցինքն կշտացած է ա'լ:

Բանի մը կենդանաբաններ կարծիք յայտնած են թէ երբ նորածին փիղ մը քանի մը օր զատեն իր մօրմէն որ յետոյ զայն չի կրնար ճանչնալ պղտիկներու խումբին մէջէն, ասով մերժել կուզէին այդ գիտնականները փիղին իմացականութիւնը: Բայց բացարձակապէս կը հերքեմ այդ պարագան որ սուտ է, ընդունելով վայրկեան մը կարելիութիւնը այդ բանին, սակայն փիղին չյատկացնելով միայն այդ բանը: Առէ՛ք կնոջմէ մը իր զաւակը ծնած պահուն, և քանի մը օր ետքը բերէք զայն դրէք 50-60 պղտիկներու մէջ և հարցուցէք մօրը թէ կը ճանչնայ իր զաւակը: Անիկայ կատարելապէս անկարող պիտի ըլլայ: Ատիկայ ինչ կապ ունի ուրեմն մեր իմացականութեան հետ:

Փիղերը շատ կը սիրեմ ես, կուզեմ զանոնք պաշտպանել, հին բարեկամի մը յարգը ունին անոնք իմ քովս, որովհետեւ տասնըջորս տարիներ աւելոյ՛ աշխարհի շրջանը իմ արկածախնդրական արշաւներուն ատեն, անոնք շատ նշանակելի ծառայութիւններ մատուցած են ինծի: Ես զանոնք մեր աշխարհին անասուններուն մէջ առաջին տեղը կը դնեմ իբր ազնուական, մտացի և հաւատարիմ:

(Շարունակելի)

ԱՐՏՈՐԱՏԷՐ ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Պապ-Ալի Գաւսէսի թիւ 23

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՊԵՐՁԵԱԿՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուրբան Համամ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանսաց տու-
կունութեամբ և գիներու անմրցելի ա-
ժանութեամբը շահած է բոլոր իրեն դի-
մող յաճախորդաց վստահութիւնը, այս
անգամ ձմեռուան յատուկ ընտիր հա-
գուստներու, կանանց քեյրոնիներու և
տղայոց չիք և դիմացկուն փութիւններու
ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ
ջերմապէս կը յանձնարարուի ամէն ա-
նոնց, որոնք պէտք ունին ներկայ եղա-
նակին հագուստի և ուրիշ նմանօրինակ
պիտոյից .

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրոյ է .

Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին .

44—50

ՇԷՆՔԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱԹ ՆԵՐԿԵՐ

National wall coating & Lythite

Աժան, լուսաւոր, շուտ կը չորնան,
վրայ չեն ելներ, գոյներնին չեն նետեր,
ջուրի և անձրեւի կը դիմանան, միւկ-
ները կը ջնջեն ևն. ևն.

Պատանայի ներկերուն իւրաքանչիւր
քառ. արշընը 10—15 փարայ .

Ներսի և դուրսի ներկերուն իւրա-
քանչիւր քառ. արշընը 20—30 փարայ :

Տեղւոյս ամէն կողմի Պատ. յաճախոր-
դաց դիւրութեան համար, վաճառա-
տունս պատրաստ է սոյն գներով իր վը-
րայ առնել ամէն դործ, թէ ներկն և
թէ գործաւորողիքը մէջն ըլլալով .

Թուրքիոյ միակ կեդրոնատեղին

Կ. Պոլիս, Ալաճա-համամ, Պազըր-
ճըլար թիւ 26, Գ. Անիմեան : — Գա-
ւառները գործակալներու պէտք կայ,
դիւրամատչելի պայմաններով .


9—20

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԵՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

Ե Ի

ՀՈՏԱԻԷՏ ԹԵՅԵՐ

Կ. Պալիս, Պահճ.Գալիու, ձեյալ-Պեյ խան, քի. 10



Ա Ն Տ Ե Լ Ի Պ
Վ Ա Ժ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՅ ԵՒ ՊԻՏՈՅԻՑ

ՄԱՍՆԱՒՈՐԱԲԱՐ

Փոփոխութիւն Եւ Գլաններու Կրտսեանի
Եւ Երկկողմ Բլագներու, Կեդրոնա-
տեղի Պահճ. Գալիու, Հաճի Պեքի
Էֆենտիի կից, Նալարգ խանի տակ
քի. 2: Մասնաձևիդ Պահճ. Գալիու
քի. 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանայ տու-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չահած համբա-
ւը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
դրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրտսեաններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլագներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
գտնուած բոլոր նմանօրինակ ապրանայ հետ, թէ՛ տոկունութեամբ, ձայնի տուելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Գաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուն ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ:

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝
Կեդրոնատեղին: